<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄԱՆԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-2019/16-23-ԵՊԲՀ-9»

ք. Երևան << >> << >> 2019 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն**, ի դեմս տնօրեն **Բ.Թադևոսյանի**, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 12296750 (տասներկու միլիոն երկու հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	**<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 32շ., բն. 10**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**
h/h 11500166513800	**h/h 002-182558-001**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 01210095**
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Էլ.Փոստ՝ lawyer@c-e.am**
	Հեռ.՝ +374(10)209777, +374(10)209775
	Տնօրեն՝ Բ.Թադևոսյան
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

BATIKYAN ARMINE 6103840430

Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, st=..., l=..., givenName=..., serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2019.06.20 11:35:48 +04'00'

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.24 18:17:04 AMST

Հավելված N 1
« » 2019 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-23-ԵՊԲՀ-9»
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չ/մ	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
14	33111490	Մարտկոց նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 369101 G5 INTERNAL BATTERY for G5	Hamilton Medical Շվեցարիա	Մարտկոց նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, կարգավորումները և տեստավորումը իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	200000	1000000	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
15	33111490	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 151976 BREATHING SET A (S. AUTOCL)	Hamilton Medical Շվեցարիա	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար, որը ներառում է արտաշնչման փականը և արտաշնչման փականի մեմբրանը, խոնավացուցիչի հետ համատեղելի բոլոր խողովակները և հոսքի տվիչի փոխակերպիչները: Շնչառական խողովակները բազմակի օգտագործման՝ ախտահանվող ավտոկլավի	հատ	380000	760000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

				միջոցով: Տեղադրումը, կարգավորումները, համակարգի հերմետիկության և ճշգրտության տեստավորումը իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:							
16	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 396008 Oxygen sensor G5, GALILEO, RAPHAEL	Hamilton Medical Շվեցարիա	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, կարգավորումները և տեստավորումը իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	185000	925000	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
17	33111490	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 391175 FAN FILTER	Hamilton Medical Շվեցարիա	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար: Կարգավորումները իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	4600	23000	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

18	33111490	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 155714 FILTER ELEMENT	Hamilton Medical Շվեցարիա	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, կարգավորումները իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	73750	368750	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
19	33111490	Ներկառուցված ռեզերվուարի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 153639 SINTERED DISK FOR TANK OVERPRESSURE RELIEF VALVE	Hamilton Medical Շվեցարիա	Ներկառուցված ռեզերվուարի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, կարգավորումները իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	92500	462500	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
20	33111490	էկրանի արտացոլման սալիկ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար 159211 IPP ESM Module	Hamilton Medical Շվեցարիա	էկրանի արտացոլման սալիկ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton G5 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	1400000	1400000	1	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

21	33111490	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար 279166 Filter	Hamilton Medical Շվեցարիա	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար: Կարգավորումները իրականացվում են Hamilton Galileo արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	4600	23000	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
22	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար 396008 Oxygen sensor G5, GALILEO, RAPHAEL	Hamilton Medical Շվեցարիա	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Galileo արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	185000	925000	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
23	33111490	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար 151976 BREATHING SET A (S. AUTOCL)	Hamilton Medical Շվեցարիա	Hamilton Galileo-ի համար նախատեսված շնչառական խողովակների հավաքածու, որը ներառում է արտաշնչման փականը և արտաշնչման փականի մեմբրանը, խոնավացուցիչի հետ համատեղելի բոլոր խողովակները և հոսքի տվիչի փոխակերպիչները: Շնչառական խողովակները բազմակի օգտագործման՝ ախտահանվող ավտոկլավի միջոցով: Տեղադրումը, համակարգի	հատ	380000	760000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

				հերմետիկության և ճշգրտության տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Galileo արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:							
24	33111490	Մարտկոցների հավաքածու նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար 155676 Backup batteries (set of two)	Hamilton Medical Շվեցարիա	Մարտկոցների հավաքածու նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար: Հավաքածուում առկա է 2 հատ մարտկոց: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Galileo արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	220000	1100000	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
25	33111490	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար 155713 FILTER ELEMENT	Hamilton Medical Շվեցարիա	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, կարգավորումները իրականացվում են Hamilton Galileo արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն:	հատ	82500	412500	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

				Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:							
26	33111490	Ներկառուցված ռեզերվուարի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար 153639 SINTERED DISK FOR TANK OVERPRESSURE RELIEF VALVE	Hamilton Medical Շվեցարիա	Ներկառուցված ռեզերվուարի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Galileo արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի::	հատ	102500	512500	5	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
27	33111490	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար 151976 BREATHING SET A (S. AUTOCL)	Hamilton Medical Շվեցարիա	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար, որը ներառում է արտաշնչման փականը և արտաշնչման փականի մեմբրանը, խոնավացուցիչի հետ համատեղելի բոլոր խողովակները և հոսքի տվիչի փոխակերպիչները: Շնչառական խողովակները բազմակի օգտագործման՝ ախտահանվող ավտոկլավի միջոցով: Տեղադրումը, համակարգի հերմետիկության և ճշգրտության տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Raphael արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող	հատ	380000	380000	1	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

				սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:							
28	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար 396008 Oxygen sensor G5, GALILEO, RAPHAEL	Hamilton Medical Շվեցարիա	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Raphael արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	185000	740000	4	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	4	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
29	33111490	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար 279676 Filter water trap	Hamilton Medical Շվեցարիա	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Raphael արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	38500	154000	4	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	4	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
30	33111490	Մարտկոց նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար 369086 BATTERY For Raphael	Hamilton Medical Շվեցարիա	Մարտկոց նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton Raphael արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության	հատ	88750	355000	4	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	4	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում

				որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:							
31	33111490	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար 281264 Fan filter	Hamilton Medical Շվեցարիա	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար: Կարգավորումները իրականացվում են Hamilton Raphael արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի::	հատ	6000	24000	4	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	4	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
32	33111490	Հովացուցիչը և տեխնիկական պորտերը ծածկող հետևի կափարիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար MSP160481 Back cover	Hamilton Medical Շվեցարիա	Հովացուցիչը և տեխնիկական պորտերը ծածկող հետևի կափարիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար, որը ծածկում է հովացուցիչը և տեխնիկական պորտերը: Կարգավորումները իրականացվում են Hamilton C2 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	183500	367000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
33	33111490	Հովացուցիչների զտիչ նախատեսված Hamilton C2 արհեստական	Hamilton Medical Շվեցարիա	Հովացուցիչների զտիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար: Կարգավորումները իրականացվում են Hamilton	հատ	21250	42500	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային

		շնչառության սարքի համար 160215 Dust filter		C2 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի					հասցեներով		օրվա ընթացքում
34	33111490	Հեպաֆիլտր նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար 160216 HEPA filter	Hamilton Medical Շվեցարիա	Հեպաֆիլտր նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton C2 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	46000	92000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
35	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար 396200 Oxygen cell	Hamilton Medical Շվեցարիա	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton C2 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի:	հատ	185000	370000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային օրվա ընթացքում
36	30237111	Մարտկոց նախատեսված Hamilton C2 արհեստական	Hamilton Medical Շվեցարիա	Մարտկոց նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար, լիթիում իոն քիմիական պարունակությամբ, լարումը 14.4 վոլտ, նոմինալ	հատ	550000	1100000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացույցային

		շնչառության սարքի համար 369106 Battery		հզորությունը՝ 6.7 Ամպեր/ժամ, տիպիկ հզորությունը՝ 6.6 ամպեր/ժամ.: Տեղադրումը, տեստավորումը և կարգավորումները իրականացվում են Hamilton C2 արհեստական շնչառության սարքն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 1 տարի::					հասցեներով		օրվա ընթացքում

1. Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:
3. Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.24 18:17:26 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 32շ., բն. 10
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
h/h 002-182558-001
ՀՎՀՀ 01210095
Էլ.Փոստ՝ lawyer@c-e.am
Հեռ.՝ +374(10)209777, +374(10)209775
Տնօրեն՝ Բ.Թադևոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

BATIKYAN ARMINE 6103840430

Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2019.06.20 12:18:12 +04'00'

Հավելված N 2
« » 2019 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-23-ԵՊԲՀ-9»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
14	33111490	Մարտկոց նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	1000000	1000000	1000000	1000000	1000000
15	33111490	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	760000	760000	760000	760000	760000
16	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	925000	925000	925000	925000	925000
17	33111490	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	23000	23000	23000	23000	23000

18	33111490	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	368750	368750	368750	368750	368750
19	33111490	Ներկառուցված ռեզերվուարի զտիչ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	462500	462500	462500	462500	462500
20	33111490	էկրանի արտացոլման սալիկ նախատեսված Hamilton G5 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	1400000	1400000	1400000	1400000	1400000
21	33111490	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	23000	23000	23000	23000	23000
22	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	925000	925000	925000	925000	925000
23	33111490	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	760000	760000	760000	760000	760000
24	33111490	Մարտկոցների հավաքածու նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	1100000	1100000	1100000	1100000	1100000
25	33111490	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	412500	412500	412500	412500	412500

26	33111490	Ներկառուցված ռեզերվուարի զտիչ նախատեսված Hamilton Galileo արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	512500	512500	512500	512500	512500
27	33111490	Շնչառական խողովակների հավաքածու նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	380000	380000	380000	380000	380000
28	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	740000	740000	740000	740000	740000
29	33111490	Օդի և թթվածնի զտիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	154000	154000	154000	154000	154000
30	33111490	Մարտկոց նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	355000	355000	355000	355000	355000
31	33111490	Հովացուցիչների օդի զտիչ նախատեսված Hamilton Raphael արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	24000	24000	24000	24000	24000
32	33111490	Հովացուցիչը և տեխնիկական պորտերը ծածկող հետևի կափարիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	367000	367000	367000	367000	367000

33	33111490	Հովացուցիչների զտիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	42500	42500	42500	42500	42500
34	33111490	Հեպաֆիլտր նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	92000	92000	92000	92000	92000
35	33111490	Թթվածնի տվիչ նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	370000	370000	370000	370000	370000
36	30237111	Մարտկոց նախատեսված Hamilton C2 արհեստական շնչառության սարքի համար	-	-	-	-	-	-	-	-	1100000	1100000	1100000	1100000	1100000

** Գումարները նշվում են ամբողջական կարգով:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.24 18:17:44 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 32շ., բն. 10
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
h/h 002-182558-001
ՀՎՀՀ 01210095
Էլ.Փոստ՝ lawyer@c-e.am
Հեռ.՝ +374(10)209777, +374(10)209775
Տնօրեն՝ Բ.Թադևոսյան

BATIKYAN ARMINE 6103840430

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, o=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2019.06.20 12:19:01 +04'00'

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն